

ԴԱՍ 16. ԳԼՈՒԽ 12 — ԿԻՆԸ, ԱՐՈՒ ԶԱՎԱԿԸ և ՎԻՇԱՊԸ

«Ու երկնքում բացվեց Աստծո տաճարը, ու Նրա ուխտի տապանակն Իր տաճարի մեջ երևաց. ու եղան փայլակներ, ձայներ, որոտումներ, երկրաշարժ ու խոշոր կարկուտ»: (Հայտնություն 11:19):

Հայտ. 11:19-ի վերջին հատվածն իրոք ներկայացնում է 12-րդ գլուխը:

Կինն ու վիշապը

Մա Աստվածաշնչի ամենակարևոր գլուխներից մեկն է. Իսրայելի առեղծվածի վերլուծությունը, առանց որի Աստվածաշունչը հնարավոր չէր լինի ամբողջությամբ հասկանալ:

1) Ու երկնքում մի մեծ նշան երևաց. մի կին՝ արևը վրան հագած, լուսինը՝ ոտքերի տակ և իր գլխին մի պսակ՝ տասներկու աստղերով: 2) Եվ նա, հղի լինելով, աղաղակում էր երկունքի ցավերի մեջ չարչարվելով, որ ծննդաբերի:

Հայտնության գրքի չորս կանայք

- Հեզաբել. Հայտ. 2:20
- Պոռնիկը. Հայտ. 17,18
- (Այն մեկը). Հայտ. 12, Եր. 3:20
- Հարսնացուն. Հայտ. 19:7, 21:2,9
- Նշանված կույսը. Բ Կորն. 11:2

Կանայք = կրոն... 2-ը բարի, 2-ը չար: Եթե այս կինը հարսնացուն է, ապա նա լուրջ խնդիրների մեջ է. նա հղի է: Եր. 3:20, 22. «Իսրայելը որպես YHWH-ի կին»: Ա Կորն. 10:32: Հրեաները, հեթանոսները, Եկեղեցին տարբեր են: Նրա ինքնությունը մեզ բացատրում է Հակոբը Ծննդ. 37:5-11-ում:

Կինը

- **Մեսիական շառավիղը սկսվում է (Ծննդ. 3:15)**

Եւ ես թշնամություն եմ դնում քո եւ կնոջ մեջտեղը, եւ քո սերունդի եւ նորա սերունդի մեջտեղը. Նա քո գլուխը ջախջախէ, եւ դու նորա գարշապարը խայթես:

- **Իսրայելը ՅԿ-ում նկարագրվում է որպես կին նեղությունների մեջ (Ես. 54:5, 66:7, Եր. 3:6)**

Ես. 54:5 - 5 Որովհետեւ քո այրը քեզ Ստեղծողն է, Զօրաց Եհովայ է նորա անունը, եւ քո Փրկիչը Իսրայելի Սուրբն է, նա կոչվում է բոլոր երկրի Աստուած:

Եր. 3:6 - 6 Եւ Տէրն ասեց ինձ Հովսիա թագավորի օրերում. Տեսա՞ր ինչ որ արավ ապստամբ Իսրայելը, նա գնաց ամեն բարձր սարի վերա եւ ամեն կանաչ ծառի տակ եւ պռոնկուեցավ այնտեղ:

- **Նա արու գավակ է ծնում. (Յայտ. 12:5, Սաղմ. 2:9, Յայտ. 2:27, Յայտ. 19:15):**

- **Սա Իսրայելն է, ոչ թե Եկեղեցին. (Միք.4:9, 5:2)**

Միք. 5:2-3 - 2 Եւ դու, ով Բեթլէհէմ Եփրաթա, փոքր ես Հուդայի հազարավորների մէջ, սակայն քեզանից պիտի դուրս գա ինձ համար նա որ իշխան լինի Իսրայելին, եւ նորա ելքը վաղուց՝ հավիտենական օրերից է:
- «Մեզ համար մի մանուկ ծնվեց...» (Ես. 9:6)

- «Կնոջ սերունդ» (Գաղ. 3:16, Եր. 31:31)
Արդ, խոստումը Աբրահամի՛ն արուեց եւ նրա շառաւիղին. չի ասում՝ շառաւիղներին, չակնարկելու համար շատերին, այլ ակնարկում է մէկին՝ «Եւ քո գաւակին», որ Քրիստոսն է:

Խոշոր խնդիրներ

- Այդ խոստումներն առանց նախապայմանների էին
- Հռոմեացիների թուղթը շեշտում է, որ Աստված դեռ չի ավարտել Իր գործն Իսրայելի հետ
- 70 շաբաթների վերաբերյալ մարգարեությունը ուրվագծում է Իսրայելի դերը Եկեղեցու ժամանակաշրջանից հետո եկող «միջանկյալ ժամանակահատվածում»
- Միայն 69-րդ և 70-րդ շաբաթների միջակայքում է Եկեղեցու ժամանակահատվածը երկրի վրա (Դան. 9:26)
- Հիսուսը դեռևս կատարելու է Մարիամին տրված խոստումը՝ նստել Դավթի աթոռին (Դուկ. 1:32):
- Ավգուստինի ոչ-հազարամյակային վախճանաբանությունը
- Հոլոկոստը Գերմանիայում

Մեծ նեղություններ

Մենք այս հարցերին կանդրադառնանք, երբ հասնենք Հայտնություն 20-րդ գլխին:

3) Ու երկնքում մի ուրիշ նշան էլ երևաց. ահա, մի մեծ, կարմիր վիշապ, որ յոթ գլուխ ու տասը եղջյուր ուներ և յոթ թագ՝ իր գլուխների վրա:

«Կարմիր». Միայն օգտագործված է 2 անգամ՝ այստեղ և Կարմիր ձի (Հայտ. 6:5): Ասոցացվում է մահվան հետ (6:4):

4) Եվ նրա պոչը երկնքի աստղերի մեկ **երրորդ մասին քաշեց** ու դրանք գցեց երկրի վրա: Եվ վիշապը կանգնել էր այն կնոջ առջև, որ ծննդաբերելու վրա էր, որպեսզի հենց որ ծնի, կուլ տա նրա զավակին:

«Իշխել երկաթե գավազանով»

- Մեսիական վերջնակետը. «Նրանց կկոտրես երկաթե գավազանով, կփշրես նրանց՝ որպես բրուտի աման» (Մաղմ. 2:9)
- Թիվատիրի նամակը. «Եվ նա պիտի հովվի նրանց երկաթե գավազանով, նրանք փշրվելու են բրուտի ամանների պես. այնպես, ինչպես Ես Իմ Հորից ստացա» (Հայտ. 2:27)
- **Կնոջ թշնամին.** կինը մի արու զավակ ծնեց, որ պետք է երկաթե գավազանով իշխեր նրանց վրա. և կնոջ զավակը հափշտակվեց Աստծո մոտ և Նրա գահի մոտ (Հայտ. 12:5)

«Աստղերի մեկ երրորդ մասին»

Մատ. 25:41 - ⁴¹ Այն ժամանակ կասե՛ ձախ կողմիններին էլ. Ինձանից դէն գնացեք, ով անիծեալներ, հավիտենական կրակի մեջ, որ պատրաստուած է սատանայի եւ նորա հրեշտակների համար:

«Այս մեկ երրորդը երկնավորների մէջ են»

Եփ. 6:12 - ¹² Որովհետեւ մեր պատերազմը արյան եւ մարմնի հետ չէ, այլ իշխանությունների եւ պետությունների հետ, այս աշխարհի խավարի աշխարհակալների հետ, այն չար հոգիների հետ որ երկնավորների մէջ են:

«Այս մեկ երրորդին հայտնապէս խայտառակեց»

Կող. 2:14-15 - ¹⁴ Եւ ջնջեց այն մեզ հակառակ ձեռագիրը հրամաններովը որ մեզ հակառակ էր, եւ նորան վեր առավ մէջտեղից եւ խաչափայտին վրա բեվեռեց. ¹⁵ Իշխանություններին եւ պետություններին՝ մերկացնելով, հայտնապէս խայտառակեց եւ նորանց հաղթանակեց իրանում.

5) Ու կինը մի արու զավակ ծնեց, որ երկաթե գավազանով հովվելու էր բոլոր ազգերին, ու նրա զավակը **հափշտակվեց** Աստծո մոտ և Նրա գահի մոտ:

Harpazo բռնել, ուժով տանել. բռնանալ, սեփական անձի համար եռանդուն պահանջել. փախցնել կամ հափշտակել. Գ.Ն. Փեմբերն առաջիններից էր, որ կարծիք հայտնեց, որ սա ավելի շուտ կարող էր վերաբերվել «Քրիստոսի Մարմնին», քան թե Համբարձմանը: (Նմանատիպ 24 «հափշտակություններից» մեկը տեղի է ունենում 5-րդ և 6-րդ համարների միջև...):

6) Եվ կինը փախավ անապատ, որտեղ Աստծո կողմից նրա համար տեղ էր պատրաստված, որտեղ նա կերակրվելու էր հազար երկու հարյուր վաթսույն օր:

7) Ու երկնքում պատերազմ եղավ. Միքայելն ու նրա հրեշտակները պատերազմեցին վիշապի հետ: Վիշապն էլ պատերազմեց իր հրեշտակներով:

8) Բայց չկարողացան դիմակայել, և նրանց տեղն այլևս չգտնվեց երկնքում:

«Եվ չկարողացավ դիմակայել, և նրանց տեղն այլևս չգտնվեց երկնքում». Ղուկ. 10:18, Հովհ. 16:11, 12:31:

Միքայել

- Գլխավոր իշխաններից մեկը. Դան. 10:13
- Հրեշտակապետ. Հուդա. 1:9, Ա Թեսաղ. 4:16
- Դանիելի իշխանը. Դան. 10:21
- Իսրայելի համար պատերազմողը. Դան. 12:1
- Մովսեսի մարմնի համար պատերազմեց. Հուդա 9
- Պատերազմեց «Տիրոջ պատերազմներում». Զաք. 14:3, Թվ. 21:14

9) Եվ ցած շարտվեց մեծ վիշապը՝ այն առաջին օձը, որ կոչվում է Բանասարկու և Սատանա, որ մոլորեցրեց ամբողջ աշխարհը. նա շարտվեց երկրի վրա, ու իր հրեշտակներն իր հետ շարտվեցին:

Կարմիր վիշապ. սատանան

- Սկիզբը. Եզեկ. 28:2-15
Եզ. 28:2 - 2 Մարդի որդի, ասա Տիվրոսի իշխանին՝ թե Այսպես է ասում Տէր Եհովան. Որովհետեւ սիրտդ հպարտացավ եւ ասեցիր. Ես աստուած եմ, Աստուծո աթոռի վերա եմ նստած ծովի միջում. Բայց դու մարդ ես եւ ոչ Աստուած, թէեւ դու քո սիրտը Աստուծո սրտի տեղն ես դրել.
- Ապստամբություն երկնքում. Ես. 14:12-17
- Հին = սկզբնական. Ծննդ. 3
- Սկզբից ի վեր ստախոս. Ծննդ. 3:4,5, Հովհ. 8:44
- Մարդու հետ թշնամի. Ծննդ. 3:14-15

«**Ծննդ. 3:14-15** - ¹⁴ Եւ Եհովայ Աստուածն ասեց օձին. Որովհետեւ արիւր այս, դու անիծեալ լինիս բոլոր անասուններիցը եւ դաշտի բոլոր կենդանիներիցը. Փորիդ վերայ գնաս, եւ հող ուտես կեանքիդ բոլոր օրերումը: ¹⁵ Եւ ես թշնամութիւն եմ դնում քո եւ կնոջ մէջտեղը, եւ քո սերունդի եւ նորա սերունդի մէջտեղը. Նա քո գլուխը ջախջախէ, եւ դու նորա գարշապարը խայթես:»

Ծննդ. 5:29 - ²⁹ Եւ նորա անունը **Նոյ** կոչեց ասելով, Սա մեզ **կհանգստացնէ** մեր գործքերից եւ մեր ձեռքերի ցավերից՝ այն երկրի պատճառով որին Եհովան անիծեց:

Ծննդ. 6:4 - ⁴ Եւ հսկաներ կային այն օրերին երկրի վրա. Եւ այնուհետեւ էլ որ բոլոր Աստուծո նրդիները մարդկանց աղջկների մօտ էին մտնում, եւ նորանք նորանց համար ծնում էին. Սորանք այն զօրավորներն էին, որ վաղուց անուանի մարդիկ էին:

- Մոլորեցնում է ողջ աշխարհը. Բ Կորն. 4:3,4

Այս աշխարհքի աստուածը այն անհաւատների սրտերը կուրացրեց...

- Մոլոր աստղեր = հրեշտակներ. Հուդա 1:13

- Յոթ գլուխ, 10 եղջուր. Հայտ. 13:1, 17:3, Դան. 7

«Նրանցից մեկից մի փոքր եղջուր դուրս եկավ, և նա չափազանց մեծացավ դեպի հարավ և դեպի արևելք և դեպի հաճելի երկիրը: Եվ մեծացավ մինչև երկնքի գորքը, և այն գորքից ու աստղերից ոմանց գետին գցեց ու կոխտեց նրանց» Դան. 8:9-10:

Յոգևոր պատերազմ

- **Նախապատմություն.** Բ Կորն. 2:11, Հայտ. 9, Ամովս 7:1, Եփ. 6:10-13, Ես. 59:17

- Եղիսելի ծառան. Դ Թագ. 6:16

Նա էլ ասեց. Մի վախենար. որովհետեւ մեզ հետ եղողները շատ են քան թէ նորանց հետ եղողները:

- Դան. 10:12-20-ի խոշոր կայսրությունների հետևում կանգնած գորությունները

- **Սատանայի մեթոդները.** Ծննդ. 3

- Մոլորություն. Բ Կորն. 4:3-4, Հովհ. 8:44

Դուք ձեր սատանա հօրից էք, եւ կամենում էք ձեր հօր ցանկություններն անել. նա սկզբից մարդասպան էր, եւ ճշմարտության մէջ չմտաց, որովհետեւ ճշմարտություն չկա նրանում. երբոր սուտն է խօսում, իրաններից է խօսում, որովհետեւ ստախօս է եւ ստության հայրը:

- **Վերջնական հաղթանակ.** Ա հովհ. 4:4, Հռոմ. 8:25-38

1 Յով. 4:4 - ⁴ Դուք Աստուածանից էք, որդեակներ, եւ հաղթեցիք նորանց. որովհետեւ ավելի մեծ է նա որ ձեզանում է, քան թէ նա որ աշխարհի մէջ է:

- **Սատանան արդեն պարտված է.** Ա. Հովհ. 3:8, Եբր. 2:14, Հակ. 4:7, Եփ. 1:20-21, Եբր. 10:12,13, Փիլ. 2:9, Սաղմ. 110:1, Հայտ. 12:101

Հով. 3:8 - 8 Եւ նա որ մեղք է գործում, սատանայից է որովհետեւ սատանան հէնց սկզբից մեղանշում է, նորա համար հայտնուեց Աստուծո Ռոդին, որ սատանայի գործերը քանդէ:

Եբր. 2:14-15 - 14 Արդ որովհետեւ մանկունքն արյունի եւ մարմնի մասնակից եղան, ինքն էլ շատ նման կերպով մասնակից եղաւ նորանց. որ իր մահովը իսափանէ մահի իշխանությունն ունեցողին այսինքն սատանային, 15 Եւ ազատէ նորանց որ մահի վախով իրենց բոլոր կյանքի մէջ ծառայության մէջ բռնուած էին:

Սատանայի հնարքները

- Կայենը սպանում է Աբելին. Ծննդ. 4
- Ադամի շառավղի ապականվելը. Ծննդ. 6
- Աբրահամի սերունդը. Ծննդ. 12, 20
- Սովը. Ծննդ. 50
- Արու զավակների ոչնչացումը. Ել. 1
- Փարավոնի հետապնդելը. Ել. 14
- Ընդդեմ Դավթի շառավղի. Բ Թագ. 7

Սատանայի փորձերը՝ իսափանելու Աստծո ծրագիրը՝ ոչնչացնելով ազգը և մեսիական շառավիղը.

Հարձակումներ Դավթի շառավղի վրա

- Հովրամը սպանում է իր վեց եղբայրներին. Բ Մն. 21:16
2 Մնաց. 21:5-6 - 5 ...Որովհետեւ Աքաաբի աղջիկը նորա կինն էր, եւ չարութիւն արավ Տիրոջ առաջին:
- Արաբները սպանում են բոլորին (բացի Ազարիայից)
- Գոթողիան սպանում է բոլորին (բացի Հովասից) Դ Թագ. 11:1-3, Բ Մն. 22
4 Թագ. 11:1 - 1 Եւ երբոր Ոքոզիայի մայրը Գոթողիան տեսավ, որ իր որդին մեռավ, վեր կացավ բոլոր թագավորական սերունդը բնաջինջ արավ:
- Եզեկիայի վերքը և այլն. Ես. 36, 38
- Արյան անեծքը Հեքոնիայի վրա. Եր. 22:30
Եր. 22:30 - 30 Տէրն այսպէս է ասում. **Անզավակ գրեցէք այս մարդուն**, մի մարդ, որ հաջողություն պիտի չ'տեսնէ իր օրերում, որովհետեւ չ'պիտի հաջողէ նորա սերունդից մէկ մարդ, որ նստի Դավթի աթոռի վրա, եւ էլի տիրէ Հուդայի վրա:
- այսպիսով, կուսական ծնունդը
- Մարդկային փորձերը. Եսթ. 3

Նոր Կտակարանի հնարքները

- Հովսեփի վախերը. Մաթ. 1
- Հերովդեսի փորձերը. Մաթ. 2
- Նազարեթում. Ղուկ. 4
- 2 փոթորիկ ծովում. Մարկ. 4, Ղուկ. 8
- Խաչը
- Ամփոփում. Հայտ. 12

...և նա դեռ չի ավարտել. Հայտ. 13

...քո և իմ կյանքում. Եփ. 6:10-18

10) Եվ մի բարձր ձայն լսեցի երկնքում, որ ասում էր. «Հիմա հասավ մեր Աստծո փրկությունն ու գորությունը, թագավորությունն ու Նրա Օծյալի իշխանությունը, քանի որ մեր եղբայրներին մեղադրողը, որ Աստծո առջև ցերեկ ու գիշեր մեր եղբայրների դեմ չարախոսում էր, ցած գցվեց»: 11) Եվ նրանք նրան հաղթեցին **Գառնուկի արյամբ** ու իրենց **վկայության խոսքով** և իրենց կյանքը չսիրեցին մինչև մահ:

Ինչպե՞ս նրանք հաղթեցին

- Նրա արյունը. Եբր. 9:12
- Վկայության խոսքը. Մաթ. 4:4,7,10, Եփ. 6:10-18, Ես. 59:17
- Չսիրեցին իրենց կյանքը. Հռոմ. 6:11-13, Բ Տիմ. 1:12, Գործք. 20:24
- 11-րդ գլխի 2 վկաները

Ջո. 6:11-13 - 11 Նոյնպես էլ դուք ձեր անձերը մեղքին մեռած համարեցեք, եւ Աստուծուն կենդանի՝ մեր Տէր Քրիստոս Յիսուսի ձեռովը: 12 Սորա համար թող մեղքը չ'թագաւորէ ձեր մահկանացու մարմնի մէջ, որ հնազանդիք նորա ցանկութիւններին: 13 Եւ ձեր անդամները անիրաւութեան գործիք մի ներկայացնէք մեղքին. այլ ձեր անձերը ներկայացրէք Աստուծուն՝ ինչպէս մեռելներից կենդանացածներ, եւ ձեր անդամներն արդարութեան գործիք՝ Աստուծուն.

12) Մրա համար ուրախացե՛ք, ո՛վ երկինքներ ու նրա մեջ բնակվողներ: **Վայ** երկրի ու ծովի բնակիչներին, որ Բանսարկուն իջավ ձեզ մոտ, մեծ ցասումով լցված, քանի որ գիտե, թե կարճ է իր ժամանակը:

Երրորդ վա՞յը. 11:14, և 13

13) Ու երբ վիշապը տեսավ, որ ինքը երկրի վրա նետվեց, հալածեց արու գավակ ծնած կնոջը: 14) Եվ այն կնոջը **մեծ արծվի երկու թևեր տրվեցին**, որ օձի երեսից

թոչի դեպի անապատ՝ իր տեղը, որտեղ կերակրվում էր մի ժամանակ ու ժամանակներ ու կես ժամանակ:

Կենտրոնացում. Իսրայելի վրա, հատկապես հավատարիժների (Եր. 30:7, Մաթ. 24:15-22):

Իսրայելի ժամանակավոր հանգստությունը

- **Արծվի թևեր Եգիպտոսից. Ել. 19:4**

Դուք տեսաք ինչ որ արի Եգիպտացիներին, եւ ձեզ արծիւի թելերի վերայ տարի եւ ինձ մօտ բերի:

- **Անապատ. Բ Օր. 32:11-12**

Ինչպէս որ արծիւը քրքրում է իր բույնը, շուտ է գալիս իր ձագերի վրա, Տարածում է թելերը, վեր առնում նորանց, Տանում նորանց իր թելերի վրա: 12 Այնպէս Եհովան միայն ման ածեց նորան, Եւ նորա հետ օտար աստուած չկար:

- **Վերադարձ Բաբելոնից. Ես. 40:31**

Բայց Տիրոջ ապավինողները կնորոգվեն ույժով, թելերով վեր կալանան արծիժների պէս, կվազեն եւ չեն վաստակի, կգնան եւ չեն հոգնի:

15) Եվ օձն իր բերանից ջրհեղեղի պես ջուր հոսեցրեց կնոջ հետևից, որ նրան հեղեղի բաժին դարձնի: 16) Ու երկիրն օգնեց կնոջը, երկիրը բացեց իր բերանը և կուլ տվեց այդ հեղեղը, որ վիշապն իր բերանից էր հոսեցրել:

17) Ու վիշապը բարկացավ այդ կնոջ դեմ և գնաց պատերազմելու նրա զավակների փացորդի հետ, որոնք Աստծո պատվիրաններն են պահում ու Հիսուս Քրիստոսի վկայությունն ունեն: (Մադմ. 124)

Երկու սերունդների միջև եղած պայքարը

- «Կնոջ սերունդը»
- «Օձի սերունդը» (սատանայական երրորդությունը).
 - Կարմիր վիշապը. սատանան
 - Համաշխարհային եկող տիրակալը
 - Սուտ մարգարեն
- Համաշխարհային իշխանությունների հետևում եղած զորություններն այսօր:

Չաջորդ դասը

- Կարդացեք Հայտնությունը 13-րդ գլուխը, որը ներկայացնում է սատանայական դուետը.

- Ծովից դուրս եկող գազանը
- Երկրից դուրդ եկող գազանը
- Ծագումնային հատվածներ.
 - Սատանայի ծագումը. Ես. 14, Եզեկ. 28
 - Ասորեստանցիները. Ես. 10:24, Միքիա 5:5
 - Ֆիզիկական նկարագրությունը. Զաք. 11:17